ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ.՝ (010) 77-81-22

№ 9/7-2101 << 26 >> 08 2020 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 001 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԴՈՑԵՆՏ Տ. ՍՈՒՋՅԱՆԻՆ

Հարգե՛լի տիկին Սուջյան,

Ձեզ է ուղարկվում Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04 – «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը:

Կից՝ կարծիքը՝ «6» թերթից (2 օրինակ) և ատենախոսությունը:

Հարգանքով՝

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Մ. ԲԱԲԱՅԱՆ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մ. Բաբայան
«26» 08 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04 – «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ.Ա. Բիշարյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Ռ. Պետրոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Գ.Գ. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ա. Թադևոսյանի, քննարկեց Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04 – «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց ներքոթվարկյալ հետևություններին:

Տ. Ղազարյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Քրեադատավարական ոլորտում սկիզբ առած բարեփոխումների առանցքային նշանակություն ունեցող հարցերի շարքում քրեական վարույթի նախաձեռնման արդյունավետ կառուցակարգի մշակումը և ներդրումը կենտրոնական տեղ է գրավում: Նշված ոլորտում ՀՀ գործող օրենսդրության բացերը վկայում են նորմատիվ կարգավորման հետագա կատարելագործման անհրաժեշտության մասին:

Ինչպես հայտնի է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը խնդրո առարկայի վերաբերությամբ առաջարկում է արմատապես տարբեր կարգավորումներ:

Ատենախոսության թեմայի արդիականության մասին են վկայում նաև սույն հիմնախնդրին նվիրված ՀՀ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների առկայությունը:

Հետազոտությունն իրականացվել է դրա առարկայի շրջանակներում. աշխատանքի գլուխներում հետազոտության առարկայի՝ հեղինակի կողմից հայտարարված տարրերը արտացոլված են լրիվությամբ:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ քրեական վարույթ նախաձեռնելու տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը:

Դրական գնահատականի են արժանի ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնցով անկասկած ապահովվել է աշխատանքի գիտական նորույթը:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է պատշաճ մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրներով, իրավական և փորձառական հիմքով:

Հատկապես ցանկանում ենք առանձնացնել հեղինակի կողմից՝ խնդրո առարկա հանդիսացող ոլորտի վերաբերյալ ՀՀ և եվրոպական նախադեպային իրավունքի ուսումնասիրումը և ստեղծագործական կիրառումը ատենախոսությունում

արտահայտած մտքերի ու արված հետևությունների հիմնավորման ժամանակ: Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևություններն ու առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության 136-րդ էջից հեղինակը սկսում է քննարկել քրեական գործ հարուցելու մասին որոշման նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հարցերը, որի ընթացքում, կարծում ենք, թույլ է տալիս, որոշակի վրիպումներ: Մասնավորապես հեղինակը 137-րդ էջում, ելնելով ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ և 182-րդ հոդվածների վերլուծությունից, արձանագրում է օրենսդրական բաց նկատելով, որ . «...դատախազը քրեական գործ հարուցելու մասին որոշման **օրինականության ստուգման արդյունքում որևէ** լիազորությամբ օժտված չէ՝ ի տարբերություն քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման...», ավելին, հեղինակը նկատում է, որ «...առկա օրենսդրական բացի պայմաններում հնարավոր չէ խոսել արդյունավետ դատախազական հսկողության մասին...»: Համանման դիտարկում հեղինակն անում է աշխատանքի հետագա էջերում (էջ 143)՝ արձանագրելով, որ «...ՀՀ քր. դատ. օր-ը լռում է այն հարցի վերաբերյալ, թե ի՞նչ որոշում պետք է դատախազը կայացնի, երբ գտնի, որ քրեական գործի հարուցման որոշումն անօրինական է»:

Սակայն, դիտարկումը, թե այս առումով առկա է օրենսդրական բաց, կարծում ենք, տեղին չէ, և դատախազը նման դեպքերում իր հսկողական լիազորությունները իրացնելիս՝ գտնելով, որ կայացվել է անօրինական կամ անհիմն քրեական գործ հարուցելու մասին որոշում, իրավասու է օգտվել քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով նախատեսված իր բացառիկ լիազորությունից և վերացնել քրեական գործ հարուցելու մասին որոշումը, իսկ այնուհետ՝ քր. դատ. օր-ի 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունն իրացնելով՝ կայացնել որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Նկատենք, որ հեղինակն ինքը, քննարկելով քրեական գործի ապօրինի կամ անհիմն հարուցված լինելու պարագայում քրեական վարույթը դադարեցնելու ձևի հարցը (քրեական գործի վարույթը կարճելու, թե՞ քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելու մասին որոշում կայացնելու ձևով), և պատասխանելով այն հարցին, թե ինչպե՞ս պետք է գործի դատախազը, նկատում է. «...քրեական գործ հարուցելու փուլում դատախազական հսկողության ամենակարևոր միջոցը դատախազի իրավունքն է վերացնելու քրեական գործ հարուցելու մասին ապօրինի որոշումը և կայացնելու քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում» (էջ 144, 2-րդ պարբերություն):

2. Ատենախոսության 144-րդ էջից հեղինակը քննարկում է այն հարցը, թե արդյո՞ք քրեական գործ հարուցելու որոշումը կարող է բողոքարկվել դատարան, և վերլուծելով այս առումով առկա օրենսդրական կարգավորումները արձանագրում է. «... քրեական գործ հարուցելու մասին որոշումը նույնպես կարող է դատական բողոքարկման առարկա լինել, եթե այն խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը» (էջ 145): Ապա հեղինակը հիմնվելով Վճռաբեկ դատարանի՝ *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշման մեջ տեղ գտած իրավական դիրքորոշումների վրա, նկատում է, որ «...այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ կոնկրետ անձի կողմից քրեորեն պատժելի որևէ արարք կատարելու վերաբերյալ հետևություն է արվում, այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, **ապա քրեական գործ հարուցելու մասին որոշումը պետք է ենթակա լինի դատական կարգով բողոքարկման**» (էջեր 148-149):

Կարծում ենք, որ քրեական գործ հարուցելու որոշման մեջ անձին իբրև ենթադրյալ հանցանք կատարողի մատնանշելն ինքն չի խախտում անձի իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ այդ փաստով քրեական փաստացի հետապնդման վիճակում գտնվող անձը ձեռք կբերի որոշակի երաշխիքներից (մասնավորապես պաշտպանության իրավունքից) օգտվելու իրավունք:

Այդ մոտեցումը ամրագրվել է, նաև Վճռաբեկ դատարանի 2019 թվականի հունիսի 12-ին կայացրած ԵԿԴ/0201/11/17 որոշման 20-րդ կետում, որտեղ դատարանը մասնավորապես նշել է. «քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարող մատնանշելն ինքնին չի հանգեցնի անձի իրավունքների խախտման, եթե վերջինս պատշաճ կարգով տեղեկացվում է **պաշտպանության իրավունքի մասին** և նրա համար ապահովվում են դրա բովանդակությունը կազմող **նվազագույն իրավունքների իրացման համար անհրաժեշտ դատավարական երաշխիքները**»:

Եվ կարծում ենք, որ միայն այն դեպքում, երբ այդ երաշխիքները չեն ապահովվի, անձը պետք է ստանա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով քրեական գործ հարուցելու մասին որոշումը բողոքարկելու իրավունք:

Հակառակ մեկնաբանման պարագայում, կստացվի, որ մինչդատական վարույթի հետագա դատական վերահսկողությունը գործարկվում է առանց դրա պարտադիր պայմանի, այն է՝ բողոքարկվող որոշմամբ (գործողությամբ, անգործությամբ) անձի իրավունքներն ու օրինական շահերը խախտելու:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Տիգրան Սամվելի Ղազարյանի ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է քրեական վարույթ նախաձեռնելու դատավարական հիմնախնդիրների համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.04 – «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ:

Տիգրան Սամվելի Ղազարյանի՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի կողմից (քննարկվել և հավանության է արժանացել ամբիոնի՝ 2020 թ.-ի օգոստոսի 26-ի նիստում, արձանագրություն № 12):

Ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյան
«26» 08 2020 թ.

Ա.Ռ. Հովհաննիսյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ,
ինքը և կադրերի և անձնակազմի հետ տարվող
աշխատանքների բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Մ.Վ. Մուրադյան